ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2018 թվականի N 55-Ա

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 07-025-0014-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, նկատի ունենալով, Գագիկ Կարապետյանին հատկացված հողամասից քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու համար, չի խոչընդոտում հողամասերի նպատակային օգտագործմանը, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողօգտագործողների պահպանության և անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով 2018 թվականի ապրիլի 18-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և Գագիկ Կարապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գագիկ Կարապետյանի սեփականության իրավունքը համայնք Գետամեջ 3-րդ փողոց N 5/2 հասցեում գտնվող, ըստ կադաստրային քարտեզագրման 07-025-0014-0001 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,0026 հեկտար հողամասի նկատմամբ, որը նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:
2. Սույն որոշմամբ ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանումում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի ապրիլի 18
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2018 թվականի N 56-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1 կետերի պահանջներով, հիմք ընդունելով Գագիկ Կարապետյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Գագիկ Կարապետյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 3-րդ փողոցի N 5/2 հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0014-0001) մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցած ավտոտնակը՝ 22,1 քառակուսի մետր մակերեսով, քանի որ.

1) տվյալ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

2018 թվականի ապրիլի 18
գ.Գետամեջ